

: ૩૮

၁၂၁၃ မြန်မာနိုင်ငံတော်လွှာ

မြန်မာစာ

Ա ՎԻԽԵՄՈՒՅՏԻ

Հագլվածութեռն Տաճանքի ճողվն վ

‘ԺՐՈՂՅԻ ԱՃԹ ՎԳՉ ԴԽՆԴՎԵՄԺՐ’

Ճանաւոր մի ըլ ժա՞զ վայուս ցէ կոփեգու մոլոչ  
Դամս Ազգայիտմակի զոգը ստմիր Օդ Ղահը ուս նզը ժճնաքոչ  
: Եվ բուժութեատ տօյ Խսկակնար նզը ժոտ վտվի յրաննոց սն  
Եվ պատմուի մզը մս Խսկող Եճուր վայուս ունեմմի մզն ժող պուր

Եհ զտգթամնու  
զտետուն  
(ՄՐՄ) զտետուն

•ԺԱՅՅ ԴԱՎՈՅ Վ  
ՎՐՄԻ ՎՄ ԳՐՈՒ ՆՄ ՍԵՇՏԵՍՈՒՐ  
Ո ՍԻՆՈՒ Ո ՎԼԵԳԺՄՈՒՐ Ո ՎՀԵԳՄԹԻ •Մ ԳԻ

• 6361 'Of ማቅረብ

1000 N. HOYNE AVE.

**ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
**TRUSTEES OF**

278. የሀብትና በርሃን ማስታወሻ

Digitized by srujanika@gmail.com



Ապահով 27, 1939

Պատռւարժն Հոգաբարձութիւն  
Հայաստանեաց Եկեղեցւոյ  
Շիգակօյի թեմին,

Ազնիւ Տեարք,

Առաջնորդարանիս Տնտեսական Խորհուրդը մեր ուշադրութեան  
յանձնեց Չեր թեմական ամսատուրքերու վճարմանց մէջ թերացման պարագան,  
որ Մայիս ամիսէն ի վեր ոչ մէկ վճարում չէր կատարած:

Այս պարագան մեզ թէ վիշտ եւ թէ մտահագութիւն կը պատճառէ,  
որովհետեւ ինչպէս Չեզ յայտնի է, թեմական ամսատուրքերը Առաջնորդարանիս  
եկամուտներու միակ գլխաւոր աղքիւրներն են, որոնց վրայ առանձիւապէս  
Ծիմնուած է Առաջնորդարանի Նիւթական մատակարարութիւնը, որոնց երբ կա-  
նանաւոր չեն վճարուիր, անձկութեան կը մտանեն մեզ:

Մենք այն խոր հաւատցն ունինք թէ, մեր համայնքներու պատ.  
Հոգաբարձութիւնները, մեզ ամէն գնով նեցուկ եւ աշակից պիտի ըրլան,  
թեթեցնելու Առաջնորդարանի Նիւթականի վերաբերեալ մտահագութիւնները  
որպէս զի մենք այ Ընարաւորութիւն ունենանց նուիրուելու գրական եւ  
արդիւնաւոր աշխատանքիք:

Անցնող չորս ամիսներու, եւ Սպահանքի ամիսն ալ, որ ահա  
կը լրանայ, միասին Հաշուած, հինգ ամիսներու Չեր թեմական տուրքի  
պարտքը կը հասնի 125 տոլարի, որը որքան իրարու վրայ բարգուի, նոյնան  
Հոգաբարձութեանդ համար կը զժուարանայ վճարումքը Ուստի կը յանձնա-  
րարենք որ, այս պարտքը կերպով մը հութացնէր հակել, եթէ նոյնիսկ հարկ  
ըլլայ փոխառութեամբ մը, եւ հետագային այ ջանագիր ըլլաց ամէն ամիս  
կանոնաւորապէս վճարելու, թէ Չեր զիւրութեան եւ թէ Առաջնորդարանի  
կանոնաւոր մատակարարութեան օժանդակած ըլլալու համար:

Ասիթէն կօգտուինք յիշեցնելու նաեւ թէ, Առաջնորդարանիս  
պաշտօնայթերթի առաջին թիւը ոյս կը տեսնէ մօտ օրէնս Հայտարակութեամբ  
առջիւ Չեր թեմին Հանուած քացարիկ օժանդակութեան բաժինը ցարդ ստաց-  
ուած չի, որը վասահ ենց թէ նոյնպէս, թեմական տուրքին հետ Միասին պիտի  
հութացնէր, որոնց համար կը կանխենք մեր շնորհակալութիւնները:

Հայրական օրէնութեամբ եւ սիրոյ ողջունիք,  
Մնամք աղօթարար

Գ. Ա.  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ  
ՀԱՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂՅՈՅԹ

TRUSTEES OF  
ARMENIAN APOSTOLIC C.

1000 N. HOYNE AVE.  
CHICAGO

*(Signature)*  
*M. V. Vardanyan*

ՅՈՒՆՈՒՅՐ 15, 1939.

Գեր. Տէր Սամբռէ Եպիսկոպոս Գալֆաեան

Առաջնորդական Տեղապահ Ամերիկայի

Նիու Յօրք.

Մրգագան Հայր,

Ստացանք Սրբազնութեանդ Յուն. 11 թուակիր նամակը որով  
մեզ կը յայդնէք թէ ֆետ. 5 ի կիրակին պիտի կրնաք Շիքակ ԸԼԼԱԼ:

Նորընտիր հոգաբարձութիւնը չուն. 13ի առաջին ժողովին՝  
Հովուր Հովուր խնդրոյ մասին նորէն նորհրդակցութիւն ունեցաւ,  
և ուրախ ենք յայտնել թէ Հովուր և հոգաբարձութեան միջն եղած  
անհասկցողութիւնները պիտի լուծուին շուտով Որոշուեցաւ՝  
ի ներկայութեան Անդամական ժողովի Ատենապետ և Ատենադպրի  
Հովուր ընտրութիւնը ընել Յունուար 22 ի կիրակին:

Հատ շնորհակալ ենք որ մեր փափաքին գոհացում տալու պատրաստ  
էք, սակայն և այնպէս չենք ուզեր ձեզ այս խնդրոյ համար անտանգիստ  
ընել և փոխանակ ֆետ. 5ի ձեր Սրբազնութիւնը պիտի փափաքինք  
ունենալ մեր մօտ մօտ ապագային աւելի գեղեցիկ առիթով մը:

Հոգաբարձութեան ընտրութիւնը եղած է բայց դիւանը ամբողջութեամբ  
կազմուած չէ՝ ընտրուող անձնաւորութեան հրաժարումով և յաջորդ քուէ  
ստացողներուն պաշտօն ընթունելու զկամութեան պատճառաւ, կաշխատինք  
ուրիշ մէկը գտնել: Վաւերացուած հաշուեկշիրի և դիւանի կազմութեան  
մասին յաջորդ նամակով կիմացնենք:

Նորընտիր հոգաբարձութեան ատենապետ Պր. Ն. Սուրեան Յուն. 13ի  
ժողովին հրաժարականը տուաւ նախապէս Տէր Դեւոնդ Աբեղայի հետ  
անհասկցողութեան եկած ԸԼԼԱԼուն պատճառաւ ըսելով թէ Տէր Հօր հետ  
չի պիտի կրնայ հասկցողութեամբ գործել և գտակար ԸԼԼԱԼ:

Պր. Սուրեան Եկեղեցոյ շատ գործունեայ անդամներէն մին է  
պիտի խնդրէի Զեր Սրբազնութիւնէն որ բարեհանիք միջամտել Պր Սուրեանի  
որ հրաժարականը ետ առնէ Յուն. 22ի Անդամական ժողովէն առաջ որ  
որիշ մէալ իր օրինակին հետևելով զի հրաժարիք նաև եթէ կարիլի և  
միւնոյն ժամանակ Տէր Զեւոնդ Աբեղայի նամակով իմացնէք որ Յուն. 22ի  
ժողովէն առաջ իրար հասկնան որ անդամական ժողովը արդիւնաւոր ԸԼԼԱԼ

Համբուրելով Զեր աչը մնամ

Ի դիմաց Եկեղեցւոյ Հոգաբարձութեան,

Ատենադպրի

Ատենապետ

Հրաժարագ

*(Signature)*

Ապրիլ 16, 1940

Պատուարժան Հոգաբարձութիւն  
Հայուսանեաց Եկեղեցը  
Երկադոյի թեմին.

Ազնիք Տետրա.

Ստացած ենց ամսոյ Զ թուակիր Զեր գրաւթիւնը, որով  
կը յայտնէիր թէ.թեմիկ Մեր այցելութեան ընթացքին, Զեր Հօգիք  
Փափոխութեան մասին Մեր ըառաջ արաշայտութեան ամթիւ, ծովագարգէն  
Հարց կը տրուի Զեզ թէ.ինչու պատճեններին չի արաւիր իրեն որ  
լրացնէ իր պայմանամբ Եկեղեցի մէջ:

Այսու կը յայտնենք թէ, մեր այդ որոշումը պայմանա-  
մամի կամ այլ Հարցի հետ ունենալութեան չունի, այլ պարզապէս  
աւելի օգոսկար կը Համարենց իր տեղափոխութեանը Պրինցիպի թեմը:

Զեր Նոյն նամակով կը խնդրէիր նաեւ որ ռազմականէք  
Զեզ Երիտասարդաց Միռեթեանց ծրագիր-կանոնագիր մըսնը ցաւինը որ  
Ներկայիս պատրաստ չունինք, և առաջն, նույց կարող եք Լեռնարկեց  
Երիտասարդութեանը կազմակերպել որոնց կրնան առաջանակիր  
մը պատրաստել ու առաջնարդութիր մինչեւ Առջնարդութին պատրաստելու  
կանոնագիրը կուզարկուի:

Գոհունակութեամբ ստացած ենց նաեւ Զեր երկարը նամակն  
ու Ներմակեալ 103-50 տալարի գումարը, որուն Համապատասխան ընկալագրերը  
կը գտնէյ Ներմակեալ գումարին:

Կը յանձնարքենց նաեւ որ բարեհանիր Եկեղեցաւէր  
Տիկնանց Միռեթեան յայտնելու փաւթացնելու - իւրաքանչիւր տարագրուէ  
մէկ տալար-ի շարժման նույնառականութու ցանկո որպէս զի "Հայուսանեաց  
Եկեղեց"ի յաշօրդ համարին մէջ ապագրուի:

Սապետով Ձեզ կարգութիւն եւ յաջողութիւն ի Տետրա,

Հայրական ողջունիւ եւ օրէնութեամբ  
Մնամք աղօթարար

Ծ. Ա.

Առջնարդ Հայոց Ամերիկայի

Հայոց առք  
Ժ. Խ.

Տունիս 26, 1941

Արժանաշնորհ  
Տ. Գարեգին Ա. ԲԵՆ. Յավակիսեան  
Ծեպահովություն

Որպէս երկարամեայ Ծոգեւոր պաշտօնեայ, Զեր այսօր յառաջացած ասրիցի բերումով, կը ապշեքը նկեղեցւոյ ծառայութենք, յիսուն և եօթը երկար տարիներու գործունեութեան ֆամիլի մը Բողոքնեաց Զեր եած, Կաւասարծ նոր ոք, Կաւասոր անզրդութեարի ամրութեամբ եւ Ներքին անրան բնիկութեավ երր յառաջարձ ակնարկ մը կը նետէց Զեր անցած այս երկար ճամրէն, որ յանահի եղած է փշու, նկառիքաններուով ու զանաւթիւններով լիցուն, Ծոգեկան աններազըրեւի գուշանակութեամբ ից լիցուն Զեր սիրուց, երր կը յիշէց այս երաների օրը ոք Հայաստանեայց Ս. Մկնեցւոյ Նուիրական կամարի տակ, առաջի Ասուսեայց Ս. Ակնու կուռքեցից ծառայեց նկեղեցւոյ եւ ազգին, Ծոգեւորականի օրինակեցի նոր գույն և կազմակերպութեամբ:

Այս օրեն ի գեր, ենեց տարիներ կիրծոյ մէջ, երեսուներկու տարիներ Պարսկայուն, Պալիս, Ս. Լուսաւորիչ նկեղեցւոյ իրը նոզիւ եւ Առաջերէց եւ ապա շարք առանձին տարիներ այս հեռաւոր ափերուն քրայ, մեւսող Փռւթանի, Րէյօթնի, Միւլօքի եւ շրջանի Զեր պաշտօնավարութեամբ եւ ծառայութեամբ, խոճի հանգույթեամբ կը նույն սույն թէ, Զեր մատոր եւ բարոյական բոլոր ոյժերը տառա վերապահեքան առանձագրեցից Հայաստանեայց նկեղեցւոյ եւ ազգին, տպրեցոց Զեր ժողովրդի համար մասնակից անոնց արածութեան եւ թէ ուրախութեան, զաւացոց ու Ասուսեան ից ժողովրդան պարզեւած շնորհներուն համար, ու տառապահի որերուն շնորհեալու հայու հաւատոցն ու յոյսը անշէջ պահել եւ բարձրանելեա զարծունեութեամբ եզրը Ծովի բարի տառա մմայոյ տառը Ասուսեայց Այս նոզեկան հոնդարիտերիւնը քիչերուն յառակ է:

Կազմունեայց զան Զեր 57 տարիներու նկեղեցական ծառայութեան տիիթով, եւ կը մաղթենի ոք Բարերարն Ասուսեան պարզեւած Զեր տառը լութիւն, բարձրութիւն եւ նրանկարիւն:

Հայաստանի բայրութիւն ողջունի  
Ասուսեան պատրիարք

Ժ. Խ.  
Առաջնորդ Հայոց Ամերիկայց

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ  
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻՔ  
ԵԿԵՂԵՑԻ



ARMENIAN  
ST. GREGORY ILLUMINATOR  
CHURCH

1000 N. HOYNE AVE.

CHICAGO, ILL.

Դեկտ. 6, 1942 Եկագոյ

Գերաշնորհ

Տ+ Գարեգին Արքեպիսկոպոս  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի և

Հայագահ Կարօտ Հայ Մտաւորականները Օգնութեան Յանձնախումբի  
Նեւ Եղբա Ն+ Ն.

Արքազան Հայր

Ձեր և Պայքարի խմբագրութեան բարեհաճ ուշադրութիւնը կը հրաւիրեմ  
Մարսէյլ բնակող երկու համեստ և ազգանուէր անձնաւորութիւններու վրայ:  
Անոնք յետին ծայր չքաւորութեան մէջ կը գտնուին և ապրուստի որևէ միջոց  
չունին:

Եղիշէ ԹՈՐՈՍԵԱՆ, շուրջ 50 տարեկան, բնիկ Տրապիզոնցի: Ընթացաւարտ  
Պէրպէրեան վարժարանէ: Երետասարդութեան ատենէն փոխադրուած և հաստատ-  
ուած է ի Մարսէյլ գործակցած է Մ+ Փորթուգալեանին իբր օգնական խմբա-  
գիր և գրաշար ԱՐՄԵՆԻԱՆԻ: Ներկայ Պատերազմին յառաջ կը գործէր իբր Հիմ-  
նադերդէր և Տնօրէն ՀԱՅ ՍԻՐՏ"ոչ կուսակցական շաբաթերթին: Ինքն ու  
եր կենը, որ գուսարն է Մ+ Փորթուգալեանի, միասին կը շարէին և կը կա-  
տարէին իրենց թերթին բոլոր աշխատանքները և այդու կապրէին համեստ  
կերպով: Թորոսեան, իբր ուսուցիչ Հայերէնի և ազգային գիտելեաց, Մարսէյլ  
մէջ հասցուցած է ազգասէր սերունդ մը: Անձնուերութեամբ գործակցած է  
միշտ Եկեղեցւոյ և մասնաւորաբար Հ+ Բ+ Լ+ Մուութեան: Նկարագիրով ուղ-  
ղամիտ, անկաշառ, համեստ և Ամօթիած է: Ուստի կը Վայելէր սէրն ու համա-  
կրութիւնը զինք ճանչողներուն և մասնաւորաբար Մարսէյլ ընտրանուոյն:

1940ին թերթին դադարման հետ ցամքեցան իր ապրուստի բոլոր մի-  
ջոցները: Ունի երկու հասուն հրեշտականման աղջիկ զաւակներ, որոնք  
կուեն կերպային: Մին վարակուեցաւ ծանր ախտով մը զոր բոյֆելու հա-  
մար Տէր և Տէկին թորոսեանին իրենց դպրոցական միւս գուստը շուարումի  
և ծայրագոյն դժուարութեանց գէմյանգիման գտնուեցանուու Զերկարեմ: Ահա  
իր հասցեն: E. Տօռօծուան, 11 Rue Ferdinand Rey, 11.  
Մարտելլե Ֆրանս.

Ցովաննեննէն, ՎԱՆԵՑԻ: Նախկին Արմենական յեղափոխական ուսուցէք  
գործէչ: 60-75 տարեկան: Հիւանդ: Ու-քաղաքացի ու-նպաստընկալ: Այր  
և կին ծերունի աննեցուկ, անգործ և անպաշտպան: Ա+ Մեծ Պատերազմին  
Ցովաննեննէս ծո. Վարդապետ Հիւսեանի հետ Երշանկայիշատակ Տ. Տ. Գեղրդ  
եւ հրամանով հաւաքեց և կշմիածին փոխադրեց Վասպուրականի ձեռագիր-  
ները: Իրեն կարելի է նպաստ հասցնել Տէար Բ+ ԱԱԾՈՅՑԵԱՆի միջոցաւ որ  
անձնուէր և պատուական երիտասարդ մըն է գործունեայ: Իրհասցէն է:

P. Մաշեօյան. 8 Bd Ճա Vauquois, La Rodioze.  
Յանուար, Մարտելլե, Ֆրանս

Մարսէլի մէջ է նաև Ե+ Արմէն որ թէ հաստատուն գործ ունի, թէ  
դրամագլուխ և թէ աշէն ձախէն դրամ և պաշտպանութիւն ճարելու հարա-  
գիտութիւն:

Ինդրելով Զեր բարեհաճ և հայրական հոգածութիւնը ԹՈՐՈՍԵԱՆի և  
ՑՈՎԱՆՆԵՆՆԻ համար կը մատչիմ է համբոյր Զեր ս+ աշոյն և կը մաս

Խ+ Ե+ Զեր Արքազանութեան

Թօն պատշաճութիւն  
ԶԳՕՆ ՎԱՐԴՊԵՏ

Նախկին Առաջնորդական ՓՈԽԱՆՈՐԴ - ՏԵՂԱՊԱՏ  
Մարսէյլ Վիճակին

Chicago

Февраль 11, 1949

Ա Ե Ժ Ա Յ Ա Ր Գ  
Տ Ի Ա Ր Բ Կ Ի Շ Մ Ա Լ Կ Ա Ն  
Ծ Ի Գ Ա Կ Ա Հ

Արթիկ Պ. Կիւլտալ եան,

Այս գիրը կը գըտե՞ օԵզ՝ ի դէմս Եթականի եկեղեցոյն նահկին Դամակալու-  
թեան, յանձնաբարեկալու քաջութեան պատճեան առաջարկութեան համար է  
համարվութեան առաջարկութեան համար է

Ասկէ զատ՝ այժմ որ եկեղեցւոյ նորոգութեան գործը աւարտած է՝ մեր յանձնան  
նարարութիւնն է՝ որ վերջին ժաղավ մը գումարէք, Հաշիւնոր փակելի եւ  
յանձնախումբը ինքզինքը լուծուած նկատէ:

Եթե նորոգութենէն ոեւէ գումար մը կայ աւելցած՝ զայն ալ Յանձնախռումքի յարմար դատած եղանակաւ կը յառկացնէք պատշաճ նպատակի մը:

Այս բայորին մասին, եթե մեր յանձնաբարութիւնները կատարուին՝ մեզ կը հաղորդէ պաշտօնապէս։ Այս մասին գրած ենք Պր. Ճէրանեանին եւս։


Մ՞եամք հայրական սիրով  
եւ օրհնութեամք  
աղօթարաբ

## Առաջնաբազմություն

\* Prelacy of the Armenian Apostolic Church  
in America.

Նոյեմբեր 11, 1953

Մեծայաբան  
Տիար Արքանեան  
Առենապետ Մայր Եկեղեցւոյ և Ազգային  
Տան Յանձնախումբի, Շիքակ



Սիրելի Պր. Արքանեան,

Երկար ժամնէ եւ մեր Մայր Եկեղեցւոյ և Ազգային  
Տան Հանգանակութեան տեղուոյ Յանձնախումբը անգործութեան  
մասնուած կ'երեւի։ Այս գործին տարապայման յապազումը  
ընդհանուր ձեռնարկին կ'անդապանայօք Ուստի բանկալի էր  
որ նոր թափ մը տա ու ուղարկի ու յառաջ տանէիք զայն։ Այս  
մասին մենք Հարկ ուզած ձեռնուութիւնը պատրաստ ենք տալու։  
Այս յառաջիկաց Ղեկանակումբի վերջերը ներակո պիտի Հանգի-  
պինք եւ կը Փափարնց Յանձնախումբից համ ժողով մը ունենալ։

Մեր այս հեղունական Յանձնախումբը կը Փափարի  
որ Զեր Հանգանակութիւն։ Պր. Արմեն Յոնեանի քով եղած գումար-  
ները, ուսիրառութիւնը յանձնին համ, զրկուին մեզ, որպէս զի  
Շիքակոյ բաժնենամբի Հաշւոյն Կեցրանական Հանձնապահին  
յանձնուի։

Յուսուլով լսել Զեզմէ տաշին տաթիւ՝

Մնամք սիրոյ ոզչունիք եւ որհնութեամբ

ազօթարար

ԱՌԱՋԱՐՈՒ ՀԱՅՈՑ ԱՄՈՐԻԿԱՅԻ

Դեկտեմբեր 16, 1954

Մեծայարդ

Տիար Խաչիկ Ճերանեան  
Առեւապետ Շինական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն  
Շիգակ.

Միքելի Պր. Ճերանեան,

Ի պատասխան Ձեր Ձեկտ 1/ Բաւակիր Նամակին որով մեզ եց յիշեցնէիք այն Խօսակցութիւնը զոր ունեցած միասին ի մասին Եկեղեցւոյն Հավիրի Մց. Կուզենը Ձեզ յիշեցնել թէ Հոգ. Յ. Սուցիան Վրզ. Գալճանեանի Ըստ զուց արգելն խօսած էօ եւ քառ ույն մենց չերինց Արքաց առարկել եւ այսու կը յանձնունք թէ Ձեր Որած կարգագրութեան գումար թէ ուսէ տեսակ Փոփոխութիւն ցննեց տարիկա առանձի զժուարութիւն պիտի յառաջացնէ:

Ըստ Հայր Սուցիանի տուած տեղեկութեան իր պաշտօնավարութեան շրջանը Սուցիթ Միլվագիի մէջ կը լրանայ յատշիկայ Թիորուարին եւ նույն Միայն պիտի կը լրանայ Փոխազրուելի Ձեր Եկեղեցին:

Իսկ Ցէր Կարգանը մէկ երկու օր առաջ Հարկագրարար մեր նախկին պաշտօնավարած Սուցիին Համար Նշանակեցինց տաժամեայ կերպով եւ շնչել կը լրանար ուրիշ կարգագրութիւն մը ընել իր մասին:

Եկեղենսթիւնի Հովիր Յ. Կարգանի Ըստ կը լրանար ընել այն կարգագրութիւնը որ նախադէս էց զարծագրուելի նախորդ Առաջնորդի կողմէ ուղրած Հրահանգավը:

Սոյսոյ է որ Հովիր Համար պիտի ունենաց կարգ մը զժուարութիւններ, բայց ի մինիթարութիւն բանեց որ մինակ զուց չետ որ կը գտնուիք այս տնօսոկ անխորժ պրութեան մը մէջ։ Ապահով ենց որ հօտակառ պիտի ունենանց արտասահմանէն ժամանող կարգ մը Հովիրներ, որոնցման պիտի կարողանանց վերջ տալ Հովիրականաց տաղնապիտներ:

Սոյն Բաւականու կը քրենք Եկեղենսթիւնի Միական Խորհուրդին եւ Հովիրներ որպեսզի Հարկ եղած ժամակարութիւնը ընթայուի Ձեր Եկեղեցւոյն, մինչեւ Հայր Սուցիանի Հոգ Փոխազրուելից։

Մասմա Հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ուշաւնիւ։

Ազօթարար

ՄԱԽԱՐԻ ԱՐԱԿԱՆԱԳՈՒ  
Ծնորեալ Առաջնորդ  
Հայր Ամերիկայի

Հոկտեմբեր 28, 1954

Պատուաբժան  
Սիսևան Խորհուրդ  
Ս. Գրիգոր Եկեղեցւոյն  
Զիգակ,

Ազնիւ սիրելիք,

Ներկայիւս Կու առնք ցաւ ի սիրո յայտնել Զեզ թէ ծու-  
նիզ Հոգեւոր Հովիւ Զերշ. Տ. Վահրամ Մ. Վրջ. ի առղջական վիճակը,  
որ Կողմնակի կերպով իմացած էինց թէ լաւ չէր, եւ ատիկա ինք, չայր  
Վահրամ, մեզ զրած իր մէկ նամակավոր հաստատած եւ շերտապէս իննորած  
էր որ զինքը Հավուութեան կոչէինց շերմ կլիմաքի մը մէջ, եւ մենց  
յարմարագոյն կարգադրութեամբ զինքը նշանակեցինք Մայամի Ս. Ցուց.  
Մկրտիչ Եկեղեցւոյ Հոգեւորական պաշտօնին:

Թաջ զիտենց թէ Հայր Սուրբին մեկնումը Զեր Համայնքին  
մէջ Խոր Վեշտ պիտի պատճառէ, զանգի ան տասց ուարիներու թղթամաւոր  
ծառայութիւն ունեցած է Եկեղեցւոյն եւ Համայնքի մէջ Վատահ ենք,  
ուակայն, որ զուք ալ մեզ Համ Համաձայն պիտի գտնուիք մանաւնդ նը-  
կատի ունենալով Հայր Սուրբի առղջական պայմանները եւ անօր ատկո-  
զական պահանջները, եւ սիրով պիտի Հաւանիք այս կարգադրութեան:

Ի հորկէ մեր տուած այս որոշումով, Հայր Սուրբին տեղը  
մէկը նշանակելու Համար նոր զժուարութեան մը առջեւ պիտի զանօւ-  
ինք, որովհետեւ մինչեւ զայ տարուան սկիզբները Հազիւ թէ կարողա-  
նանք տրամադրելի Հովիւներ ունենալու Բայց մինչ այն պիտի յանձնա-  
րաբնք էվրոպեանի Համայնքին Հովիւ Արժանաշնորհ Տ. Վարդան Քւն. ին  
որպէսզի, մինչեւ որ ի վիճակի ըլլանց Զեզի Հովիւ մը նշանակել, Հո-  
գեւոր մատակարարութիւն ընծայտ Զեր ծուխին:

Յայտնելով ույն կարգադրութիւնը ի գիտութիւն եւ Հաստա-  
տութիւն, կազօթենք ի բոլոր սրտէ որ Զերը մօտ ապագային մեզ այս  
Հնարաւորութիւն, Զեր Համայնքին Համար նշանակելու յարմար Հովիւ  
մը:

Մնամք Հայրական սիրոյ ողջունիւ,

Ազգային

ՄԱՍԻՐԻ ԱՐՁԵԴԻՍԿՈՊՈՍ  
Յեզական Առաջնարդութեան  
Հայոց Ամերիկայի

*Chicagof*

Փետրվար 4, 1954

Հագեշնորհ  
 Տ. Վահրամ Ս. Վրդ. Խաղաքիթեան  
 Խախագահ Մխական Խորհուրդի  
 Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն  
Միջակոյ

Սիրելի Հայր Վահրամ,

Ստացած ենք Ձեր Դեկտեմբեր 15-ի եւ Յունվար 9-ի  
Խամակները:

Ձեր ուշադրութեան կը յանձնենց մեր Դեկտեմբեր 10-ի  
շրջարերականը եւ մանաւանդ այն մասը թէ տեղեկագրի ձեւը պետք  
եղածին պէս լեցնելէ եաց, ուրիշ Խամակի պէտք չի մնար Մխական  
Անդամական ժողովի որոշումներուն եւ Մխական Խորհուրդի նոր  
անդամներու ընտրութիւններուն Համար Առաջնորդարանի վաւերա-  
ցումը ստանձնու Համար, եւ թէ այս տեղեկագրէն զատ ուրիշ Խամակ  
ընդունելի պիտի շրջաւ Նոյն նպատակի Համար:

Տարեկան Անդամական ժողովի Յունվար 1-ին առաջ  
գումարումը Կանոնագրի Հակառակ է: Այժմ որ կանոնական ժամա-  
նակը Հասուն է՝ պէտք է այդ ձեւերը մանրամասնութեամբ, Հաւասար-  
մութեամբ եւ ճշգրտութեամբ լեցուին եւ մանրամասն Հաշուական  
տեղեկագրի Հետ մեջի զրկուեն, որպէս զի նոր Մխական Խորհուրդը  
վաւերացնենց եւ պաշտօնի անցնի:

Այս ամիս կ'ուզենք յիշեցնել Ձեզ նաեւ որ զուր-  
իրքեւ հովիւ կանոնագրի անթերը գործադրութեան աշալուրը ըլլաց,  
եւ քմահան կերպով "պատուակալ" անդամներու, եւայլն, տարօրինակ  
գաղափարներուն տեղի շտաբ:

Փափաքելի է ուրեմն որ Ձեր գործոց կանոնաւոր եւ  
բարեօք կատարման Համար ուշադիր կերպով հետևից մեր ցուցմունք-  
ներուն:

Մնամք Ձեր սիրոյ ոզքունիւ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԵՎՈՅ ԵՎ ԱԶԴՅԱՆ  
ԱԽՏԱՎԱԿԱՆ ՊԱՍՏՈ

Յանձնութեա կախմբա, օյսուլ

• Աղջոկտինության և մահ գեց իւ  
-պինը ու զարդարվե ու սեղադի Եր զատ դիւ խոլովանու:

— առջի բույր 3ի սղծ միտք օգոգլւասութեան ը զժնածք զարդար եւ զ քահանց  
— սցր նուզնակա ոզմեկ սմուզման ավագան զահանցութեան լոզբուն օչպի  
— պազմու զ շամա չնյո նմանան դահուղութեան ը տո յաւ ընդունի — մուրութեան սրաց  
— զբա նորման յաւզան թագ գոնց տայսուց լու տնիկ յայլը — մուսաց ըստ ու ու ու  
— սմսամակ, երգը խաղաւակոն շնոր յամ զըստման ը տո ի կառաւց

«զագլուհու օրեւ վԵզմոց»

• օկտնվէ  
բարեգնեհզ զվմստուսղ Սօնկմ+ • ը  
վնչուցմաւ զոհացրտուց ուղևոր զառ  
զոգլուսդու իշտի՛ մոկէ  
եսմբտու

Digitized by Google 1.1855  
Digitized by Google 1.1855

Թիւ 780  
Մայիս 22, 1956

Արժանաշնորհ  
Տ. Ֆիզիան ՔԷՆՅ. Խոյեան  
Նախագահ Միական Խորչուրդի  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Ծիգակու.

Սիրելի Տէր Ֆիզիան,

Խնչպէս գիտէք Ձեր Միական Խորչուրդի նիստին մէջ  
Խոստացանց Մարք Պալեօնի կառկէն 300 տոլար յատկացնել տեղի  
Միական Պարբորին:

Ուրախ ենք յայտնելու որ յիշեալ զումարին վրայ  
200 տոլար եւս աւելացնելով՝ այսու ներփակ Ձեզի կը զրկենք  
500 տոլարի փոխզիր Մը, որը ամրութեանք պէտք զարծածել  
պպրոցի կարիքներուն համար:

Հաճեցէք Համապատասխան ընկալագիր Մը որկել մէր  
Հաջիւներուն Համար:

Յաջողութեան մաղթանցներով.

Մնամք սիրոյ ոզնունիւ  
Ազ օթորտ

ՄԱՐԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՉՈՂՈՑ  
Առջնարդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1134  
Հոկտեմբեր 22, 1956

Արժանաշնորհ  
Տ. Տիգրան ԲՇՆ. Խոյեան  
Նախագահ Միական Խորհուրդի  
Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Նիգական

Սիրելի Տէք Տիգրան,

Պաշտօնագրով Խօթ Սէնթ Լուիզի Միական Խորհուրդը մեզ կը  
տեղեկացնէ թէ Եկեղեցին պատրաստ պիտի ըլլայ Նոյեմբերի կիրուն եւ կը  
խնդրեն ոք զուք, ոք ձեր խորհուրդներով ու ցուցմունշներով շատ զգ-  
տակար եղած եք իրենց, վերջին ծրկու շարաբնան բնթացոյին իրենց մէջ  
զտնուիր. Վերջնական կարգադրութեանց համար ընկլու հարկ եղած թելադ-  
րութիւնները

Եթէ կարելի է, Պատաւարժան Միական Խորհուրդից Համառու-  
թեամբ, Հեզի եղած պիմումին ընդառաջներով հանեցեթ ըլլայ Խօթ Սէնթ Լու-  
իզ Մրկու շարքին մինչեւ շարաբնակեցն, այսինքն Կիրակի Ս. Պատարագ մա-  
տուցաններով Եկեղեցւոյ մէջ, շարաբնան մնացնաց ժամանակը յատկացնել  
անոնց զործին, այսպէս ընկլու երկու համայնքներուն ալ գոհացում տուած  
պիտի ըլլայ

Սեբ Ժամանակացոյցին վրայ Նոյեմբեր 18ի Կիրակին նշանակած  
էինք Խօթ Սէնթ Լուիզի Եկեղեցւոյ օծման համար եւ այզպէս ալ իմացուցած  
էինք իրենց, բայց ցարդ, Հակառակ ոք Եբեք օք առաջ Ծնազրու ալ շեշտ-  
ցինք այդ պարզագան, զարձեալ մեզի շնու իմացուցած թէ այդ օքը իրենց յար-  
մար է թէ աչ Հիմա նոյ. 18ը յատկացուցած ենք ուրիշ Համայնքի մը եւ  
առևել պայմաններու մէջ չենք զիսեք թէ մինչեւ Դեկտ. 30ը պիտի կրնանց  
իրենց մէջ ըլլալ թէ ոչ սրէ կը Հանձիք առաջաւ մք ընկլու մեզի իմա-  
ցուցած թէ իրենց Եկեղեցւոյ օծման Համար ինչ թուական պիտի նախշնորհէին  
որպէսզի մենք ալ բայ այնմ կարգադրութիւն ընենք

Հազարդելով զայս առ ի պիտաքիւն եւ մաղթելով ձեք Եկեղե-  
ցաշէն զործոց յախողութիւն.

Մնամք Հայրական սիրոյ ողջունի  
Աղօթաբար

ՄԱՐԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՈՒԹՅՈՒՆ  
Առաջնարդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1133  
Հոկտեմբեր 22, 1956

Արժանաշնորհ  
Տ. Տիգրան ԲԵՆՅ. Խոյեան  
Նախագահ Միական Խորհուրդի  
Ա. Գրիգոր Լևսուսիս նկեղեցւոյ  
Շիգակը.

Սիրելի Տէր Տիգրան,

Ստացած ենք ամսույս 5 թաւակիր Ձեր նամակը, որուն զժրախ-  
տարար ձկրտինց իսկոյն պատասխաննել Թեմ. Կատամ. Ժաղանի առջև ծայր առ-  
ոինան զբաղուած ըլլալով։ Ձեր առյն գրութեան մէջ կը յայտնէիր թէ երի-  
ցառուն մը կուզէօ գնել քան հազար առջար առժեքով եւ հանիստնարին Հա-  
մար կը Փախառութիւն մը ընել Առշնորդարանի Սահմանադրութեամբ։

Ձեր նամակը ընդհանուր լուսաբանութիւններ շէր տարե Ըստ  
մեր Հասկացողութեան, նկեղեցւոյ անունով պիտի գնէիր այս շէնքը եւ  
Փախառութիւնն այ պիտի ըլլար եկեղեցիկո անունով, քանզի միայն այդ  
պայմանու կարելիր պիտի ըլլայ Հիմնադրամէն Փախառութիւն ընթե Սինչզեռ  
մեզի զրկուած պայմանագրէն կը հասկնանց որ Տէր Տիգրանի անունով պիտի  
կատարուի շնորհին զնումն ու Վոխանցումը Տէր Հայրը Համայնքի մեզի  
տաւու յաւելեալ բացատրութիւն, ըստ որում եկեղեցւոյն անուան պիտի  
առնուի մուրհակը Հաճեցէօ այս պարագան Հաստատելու

Ներփակ կը գնէր երկու օրինակ դիմումնազրեր Անոնցմէ կու-  
գէ ունենալ Առշնորդարանի Հիմնադրամը օրինական գետնի վրայու Այս թուզ-  
թերու առաջին էջին Վրայ պէտք է երեւի Միական Խորհուրդիո պիտու սառ-  
բազրութիւնն ու նկեղեցւոյ կնիքը. իսկ երես- չորս ազգայիններ երաշին-  
ուորն ըլլալիթ Վոխանուութիւնը Այս գործադութիւնը կատարելով Հաճեցէօ  
վերադարձնել որպէսզի ընթացք տրուի Ձեր Խնդրանքին Անշաւշտ օրինաց Հա-  
մայնքն, նկեղեցւոյն նաև այս շնորհ տիտր եւս պէտք է առնուի Առշնոր-  
դարանի անուանն

Սպասելով Ձեր պատասխանին եւ մազթելով Ձեր գործոց յախ-  
զութիւնն.

Մամբ Հայրական սիրոյ ողջունի  
Ալօթարար

ՄԱՄԲԻ ԱՐՁՈՒՄՆՈՉՈՂ  
Առշնորդ Հայր Ամերիկայի

Թիւ 1160  
Հոկտ. 30, 1956

Արժանացնորհ  
Տ. Տիգրան ՔՇՆՅ. Խոյեան  
Հոգեառ Հովհաննես Ս.Գր.Լուս.Եկեղեցւոյ  
Ծրբակօ.

Միրելի Տէր Տիգրան,

Ստացած ենք Հոկտ. 29 Բուտկիր Ձեր նամակը։ Գրե։ Մա-  
նուելեան նաեւ մեզ Հաղորդեց Ծառայնով Ձեր ըրած յանձնաբարե-  
թիւնը։

Այսու կը յայտնենք թէ նոյեմբեր 18ին պիտի կտարենց  
Խօթ Ս.Լուիզի եկեղեցւոյ օծումը։ Յայտաբարւութիւնը պատրաստելու  
առեն ոք Շաբաթ երեկոյ պիտի կտարւուի /Ժամը տեղին յարմարու-  
թեամբ/ զանրացէքի պաշտօնական արարողութիւնը եւ անօթներու ո-  
ծումն ու օրհնութիւնը, իսկ Կիբակի օք եկեղեցւոյ օծումը։

Մենք մտադիր ենք նոյեմբեր 16ին ժամանակ Խօթ Ս.  
Լուիզ, ժամը իրենց կիմացնենց։ Այս մտուն գրած ենք նաեւ Միա-  
կան Խորհուրդին։

Հաղորդելով զայս ի գիտութիւն եւ մաղթելով Ձեզի  
ոյժ եւ կարողութիւն։

Մնամք Հայրական սիրոյ ողջունիք  
Աղօթաքար

ՄԱՍԻՐԻ ԱՐՁԵԳԻՍԿՈՎՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1206  
Նոյեմբեր 8, 1956

Մեծայարդ  
Տիար Խաչիկ Ճէրանեան  
Ատենապետ Մխական Խորհուրդի  
Ա. Գրիգոր Ղուսաւորիչ Եկեղեցւոյ  
Ծիգակօ.

Յարդելի Պրն. Ճէրանեան,

Ներփակ կը վերադարձնենք ձեր զիմումնագիրք Առաջնորդարանի Մասնաւոր Հիմնադրամի Խնամակալութիւնց, կանոնադրային բացառիկ որոշմամբ Մխական Խորհուրդի ղիւանի առորագրաւթիւնը բաւական համարած է ըլլալիք փոխառութեան համար եւ փոխգիրն այլ պատրաստ է Ասիկա կը նեն պարզապես եկեղեցւոյ կարիքները բառնալու համար:

Թուղթին առաջին էջը զիմումնագիրն է Երկրորդ էջին վրայ է որ Մխական Խորհուրդի ղիւանի անդամներէն իւրաքանչեւթը պէտք է իր առորագրութեամբ երկու հազոր տոլարի փոխառութիւնքը Ուրեմն Հաճեցէք Երեքիդ Կազմէ Երկրոդ էջին Վրայ տակ այդ Երաշտ խառութիւնը եւ Մասնաւոր թղթառով Մեզի վերադարձնել որպէսզի պատրաստ փոխգիրը Զեզի ղրկուի Առաջնորդարանի Մասնաւոր Հիմնադրամի Խնամակալութեան կողմէն:

Հաղորդելով զայտ առ ի գիտեւթիւն եւ ի գործադրութիւն.

Մնամ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՄԱՍԻՐԻ ԱՐՁԵԳԻՒՄԴՐՈՒ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1230  
Նոյեմբեր 14, 1956

Արժանաշնորհ  
Տ. Տիգրան ՔՇՆՅ. Խոյեան  
Նոհանական Ծխական Խորհության  
Ա. Օրինակ Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Ռիզակա.

Ոիրեւի Տէր Տիգրան.

Տարբույս Հոկտ. 30 Բուակիր Նամակին Կցուած Ձեզի պր-  
կեցինք Մարի Պալեօդի Կտակի 1955ի Հաշուեկշիոք. ուրկէ կը տեսնուի  
թէ զանձին մէջ զրամ չկայ:

Նահապէս Ձեզի պրած էինք թէ Խուպլով զործակատարին հօտ  
եղած Համաձայնութեան հետեւանքով 3510.00 պարտք մը ունէինք իբրև  
Հատուցում /քոմիշըն/ որ անյապաղ պէտք է վճարուեքը ծւ տրուած ըլ-  
լալով որ զանձին մէջ զրամ չունինք. Հասկացողութեան եկանք որ ամ-  
սական վարձքերու եկամուստէն վար դնէին Մինչեւ որ իրենց Հաշիւը փոխ-  
ուէքը Հիմա պարտք մնացած է 1774.30 տոլարը հոկ յետ այսու ամսոկան  
Եկամուստին կեսը Խուպլովին թէ կեսն ալ Առաջնորդարանին կամ մեզի պր-  
տի տրուի Մինչեւ որ յիշեալ 1774.30 տոլարի պարտքն վճարուի յառաջի-  
կայ 9-10 ամսուան մէջ:

Այժմէն իսկ ի կիճակի ենք Զեր Ծխական դպրոցներուն ամսո-  
կան 75.00 տոլար տրամադրելու նը Խորհինք թէ այս գումարը Ձեզի զիւ-  
ռութիւն: պիտի տայ կրթական Զեր գործերը յաջողութեամբ յառաջ տանե-  
լուս Ներփակ կը գտնէք Նոյեմբեր ամսուան յառաջումը 75.00 տոլարի  
փոխողիր մը Հաճեցէք մեզ տեղեակ պահել Զեր դպրոցներու տարեկան պրո-  
ճէի գումարը հոկ երբ Խուպլովի ունեցած մեր պարտքները մաքրենք. ոյն  
առեն պիտի կրնանք աւելիով օժանդակել Զեր կրթական գործինք:

Այս ապթիւ կուզենք ըսել թէ կը կարծէինք թէ այս ամսուան  
մէջ նոթ Ս. Լուիզի Եկեղեցւոյ օծումը պիտի կառարէինք եւ Հոնկէ այ-  
ցելէինք Զեր ծուխը. բայց այդ օծումը յօտաձգուած ըլլալով Դեկտեմբե-  
րի Վերջառութեան, Միայն Յունաւորին մէջ պիտի կրնանք Զեր մէջ զբա-  
նուիլու:

Հազօքդելով վերոյիշեալ ները առ ի գիտութիւն եւ մաղթե-  
լով ի Տեսանէ յաջողութիւն:

Մնամք Հայրական սիրոյ ոզիւնիք  
Աղօթարք Հայոց Ամերիկայի

ՄԱՄԲՐԻ ԱՐԹՈՂԻՌԱԴՈՂՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1450  
Յունվար 4, 1957

Արժանաշնորհ  
Տ. Տիգրան Քենյա Խոյեան  
Նախագահ Շիական Խորհութեան  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Եկամակօ.

Միբելի Տէր Տիգրան.

Առաջնորդ Սրբազան Հօր յանձնարարութեամբ առործ  
կուտանք Խորին Սրբազնութեան կողմերդ այցելութեան ժամանակա-  
ցոյցը որպեսզի ըստ այնմ ընէք Ձեր կարգադրութիւնները:

Փետրուար 10ին ան Կըլլայ Եվընթըն

Փետրուար 17ին ան Կըլլայ Ծիգակօ

Փետրուար 24ին ան Կըլլայ Նիակարա Ֆօլգ

Մարտ 3ին ան Կըլլայ Թէյսին

Մարտ 10ին ան Կըլլայ Ս. Միլվածի

Մարտ 17ին ան Կըլլայ Ուենդ Ալիս

Յէեւ վերջի երկու եկամակիները կը զուգագպին Մեծ  
Պահաց, բայց Առաջնորդական Պատարագի մատուցման առթիւ Վարագոյ-  
քը բաց կը պահանիւ

Ս. Ծնունդի եւ Ամանօրի տօներան առթիւ Հաճեցէք  
ընդունիք Մեր սրտագին շնորհաւորութիւններն ու Համակրութիւնը:

Մնամ Խորին յարգանօք

Սուրէն Մանուկյան  
Դիւտնապետ Առաջնորդարանի

Թիւ 2185  
Սեպտեմբեր 20, 1957

Պատուաբժան  
Մխական Խորհուրդ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Նիզակու.

Ազնիւ սիրելիք մեր.

Ըստ ԲՀԿ առ թիւմը ստացած ենք ամսոյն 13 թուակիր Զեր Նամակը, որուն կցած է 150 տոլարի փախզիր մը իրեւ ժամաց օրեց պատարագներու թէեւ կեսէր թէ նախապէս ուրիշ փախզիր մը զրկած էք. բայց կը ցաւինք ըսելու որ չենք ստացած զայնտ

Նաեւ ստացած ենք ամսոյն 16 թուակիր Զեր Նամակը, որով կը լուղրէիք Պրն. Օննիկ Գալուստեանը ունենալ իրեւ Զեր զպրոցներու ուսուցիչ Պավելի է Զեր Փափրը եւ այժմէն իսկ անոր թուզթերը կը պատրաստենք զինքը մնայուն Հաս պահելու Համար Պրն. Պալուստեան բարեկիրք եւ պատրաստւած երիտասարդ մը ըլլալով կը խորհինք թէ օգտակար պիտի քլայ թէ Զեր կրթական գործին եւ թէ այ զիւանական աշխատանքներուն Անդիշապէս որ ան արտօնուի Հաս մնալ, զինքը կուզարկենք Զեզ մօտ

Գալով Պալեօզի կտակէն ամսական 75 տոլար Զեր զպրոցներու յատկացումին, ըստ մեր խոստման սիրով պիտի կատարենք, պայմանաւ որ բաց պահէք Զեր զպրոցները եւ բարի Ըլլաց պարբերաբար մեզի ննրկայցնել Զեր պիտէն, աշակերտաւթեան թիւը, ինչպէս նաև ուսուցչին ամսականքը Այդպէս կը նեն թեմիս միւս զպրոցներու խնամակալութիւնները Անցեալ պարի, Հակառակ որ Զեր զպրոցները փակ պահեցիք, քանի մը ամիսներ կանոնաւոք Զեզի առաջեցինք ամսական 75 տոլար, որովհետեւ անգիտակ էինք կացութեան:

Կուզնիք դիտել առաջ թէ ամսական այդ զումարի յատկացումը կը նք զպրոցի պիտէին օգնելու Համար եւ կակնկալ ենք որ միայն այդ նրապատճին Համար գործածուի Ուրեմն փափաքելի է որ մեզի տեղեկացնէք Զեր զպրոցներու բացուած Ըլլալը, որպէսզի կանոնաւոր կատարենք ամսական 75 տոլարի յատկացումները Պատահի որ էշտիանէն մեր վերապահը ու շանայ, եւ մինչ այդ Զեր զպրոցները բաց պահուին, մեր վերապահին ծիանուազ կը կատարենք այս տարեմուտին յետնեալ յատկացումները թելազրելի որ անցեալ տարեւան մէջ զպրոցին Համար Զեզի զրկած զրամները այս տարի գործնենք Հազար Զեր կրթական կարիքները

Հազարդելով զայս տա ի զիտութիւն եւ մազթելով Զերկրթական աշխատանքներուն յաշնութիւն.

Մնամք Հայրական օրհնութեամբ  
Ազօթաբար

ՄԱՍԻՐԻ ԱՐԵՎԻՐԱԿՈՍ  
Առաջնարդ Ամերիկայի Հայոց

Թիւ 2228  
Հոկտեմբեր 9, 1957

Պատուարժան  
Մխական Խորհուրդ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Ծիգակո.

Աղնիւ սիրելիք մեր.

Ստացանք ամսայս 7 թուակիր Ձեր երկու Նամակները Ձեր ծր-  
խական տուքնեցու հարցը նկատի պիտի առնենք եջմիածնէն մեր վերաբերին  
Մեր վիզան քիչ առաջ եկաւ եւ մտադիր ենք այսօր կամ վաղը առաւած մեկ-  
նիլ.

Տանի որ կը հաստատեմ թէ ձեզ զպրոցները բացուած են ներ-  
փակ ձեզի կը զբիւնք ուն տուարտ փոխդիր մը Մարի Պալեօնի կտակի եկա-  
մուսէն որեք ամսաւան—Հոկտեմբեր, Նոյեմբերը եւ Դեկտեմբերը—Համար

Պալով Օրիորդ Միքարփի Երեցեանի մասին որ կուզէք Ձեր  
Կիրակնօքեայ զպրոցի ուսուցչութեան պաշտօնին կոչելու և զաւինք ը-  
սելու թէ Կիրակնօքեայ զպրոցի ուսուցչի Համար Պաղմային ջրածնեակի  
մու դիմում չենք կրնար կառաջել, վասնդի այդ առանկ ուսուցիչ կարելի  
է գոնել Հոս, կապարկուիծ

Եթէ Եկեղեցնի Ս. Պակար Եկեղեցւոյ ծրական խորհուրդը  
շանէ ընէ զպրոց մը բանալ այն ժամանակ կարծելի է իրենց զպրոցին Հա-  
մար իբր ուսուցչի դիմում կառաջել Պաղմային ջրածնեակին Ժուան Մենք  
կարտօնենք որ անոնց իրենց Եկեղեցւոյ անունով ուղղակի դիմում կառաջեն  
Պաղմային ջրածնեակին մու Օրիորդ Միքարփի Համար, աւելցնելով որ ա-  
նոր նան պատրաստուած Հայ ուսուցչի մը պետք ունին Այդ առանկ դիմում-  
նադրի մը օրինակ նն ընակ ձեզի կը զրկենք որ իրենց յանձնէք Ձեր Եկե-  
ղեցւոյ Համար արդէն դիմում զրած ենք Պր. Ոննիկ Պալուստանի Համար,  
Երերողի մը Համար չենք կրնար դիմում ներկայացնել Սակայն եկեղեցնի  
Եկեղեցւոյ անունով կարծելի է դիմում ընթլ.

Իսկ Ձեր Համար Համար ալթուով ենց շուտով կը կարգադրուիք  
կը սպասենք Պաղմային Ջրածնեակին սատանալ վիզայի արտօնութիւնը որ կը  
հաւատնը թէ ի մօտայ պիտի տրտւի

Հաղորդելով զայս առ ի գիտւթիւն եւ մաղթելով Եկեղեցա-  
շէն Ձեր գործոց յաջողութիւն.

Մնամք Հայրական օքնութեամբ  
Աղօթարք

ՄԱՐԱՐԵ ԱՐՃԵԴԻՍԿՈՊՈՍ  
Առաջնարդ Ամերիկայի Հայոց

Թիւ 291  
Մայիս 13, 1959

Մեծայարդ  
Տօքթ. Համբար Խազընեան  
Առենապետ Միական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Ղուս. Եկեղեցւոյ  
Եկամակօ.

Ցարգելի Տօքթ. Խազընեան,

Առաջնորդ Սրբազն Հօր Հրահնգով այցու պատուարժան Միական Խորհուրդիդ կը Հազորդենց Հետեւեալը.

Նկատի ունենալով որ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովի Արժանաշնորհ  
Տ. Վրթանէս Աւագ ԶՀՆ. Փափազեան Մայիս 17ին Ուսող Փուլմընի, և Մայիս 24ին Խոթ Ս. Ղուկի մեր Եկեղեցիներուն մէջ պիտի պատարագէ.

Եւ նկատի ունենալով որ Երուսաղէմի Պատրիարքութեան Նուիրակ Հոգեւնորհ Տ. Հմայեակ Ս. Վրդ. Խնդոյեան կողմերդ պիտի գտնուի Մայիս 15ին սկսեալ.

Նորին Սրբազնութեան կարգադրութեամբ Նուիրակ Հայր Սուրբ  
պիտի այցելէ Համայնքիդ եւ Եկեղեցւոյդ մէջ Մայիս 17ի Կիրակին Սուրբ  
Պատարագի մատուցմամբ պիտի միսիթարէ Համայնքիդ Հաւատացեալ ժողովուրդը

Այս կարգադրութիւնը նախապէս Առաջնորդաբանիս յանձնարարութեամբ Հոգեւնորհ Տ. Վարուժան Վրդ. Գապարանեանի կողմէ Հազորդուած օլլալով Տ. Վրթանէս Աւ. Քահանայի եւ Պատուարժան Միական Խորհուրդիդ, այսու պաշտօնապէս կը Հաստատենց զայն։

Մամբ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

Միհրան Ս.ՎՐԴ. ԿՐՑԻԿՅԱՆ  
Առաջնորդական Փախանորդ

Թիւ 486  
Յուլիս 1, 1959

Մեծայարգ  
Տօրթ. Համբար Շաղընեան  
Առենապետ Մխական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ նկեղեցոյ  
Երգակօ.

Ցարգելի Տօրթ. Շաղընեան,

Նկատի ունենալով Մօնթըրեալի մեր անհոգի համայնքի ան-  
ձուկ միճակը, այսու Զեզի կը Հաղորդենք թէ Զեր Հոգի Արժանաշնորհ  
Տ. Վրժանէս Առաջ ՔՇՆՅ. Փափազեան, մեր Հրահանգով Ցուցիսի կէսին  
պիտի մեկնի Մօնթըրեալ. մէկ ու կէս ամիս ածզւոյն համայնքին համար  
աշխատանք կատարելու և կազմակերպչական գործերուն ընթացք տալու և

Զեր Հոգիի բացակայութեան՝ ծուխիդ անհրաժեշտ ծիստառա-  
րութեանց համար դիմեցէ էվընսդընի համայնքին Հոգեւոր Գովի Հոգ.  
Տ. Վարուժան Վրդ. Գաղաքանեանի

Չայս Հաղորդելով Զեր սիրելիութեան առ ի գիտութիւն.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունի  
Եւ օքնութեամք  
Աղօթարաբ

ՄԻՈՒ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ  
ՄՈՆԹՐԵԱԼԻ ՀԱՅ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ



PARISH COUNCIL OF  
ARMENIAN CHURCH  
OF MONTREAL

Մայ. 1, 1959.-

Գերաշնորհ

Տ. Սիոն Ս. Արք Եպիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հայոյ Ամերիկայի,  
Նիւեռոք.- .

Սրբազն Հայր,

Շիգակթյէն Տոքթ. Հ. Եազըճեանէ նամակ մը առի, որով փափաք կը յայտնէ  
որ Սեպտ. 13 ին-ԽԱԶՎԵՐԱՅԻ Տօնի առթիւ Շիգակթ գտնուիմ եւ պատարագեմ:  
Անցեալ Ուրբաթ Օր ժամանակ չունեցանք, որ ես Զեզի ըսէի թէ, Շիգակթյէն մեկ-  
նած ատենս իրենց ըսած էի թէ, ես այլեւս պիտի չը վերադառնամ, եւ իմ հրաժա-  
րականս ղրկած եմ Առաջնորդ Սրբազնին: Արդ Սրբազն Հայր, Հոս՝ Աստուծոյ կամ-  
քով 8-10 Օրէն գործերս կարգի կը դնեմ, եւ Զեր բարձր հրահանգին համաձայն կը  
վերադառնամ Շիգակթ; Այս Օր Տքթ. Եազըճեանին եւս գրեցի այս մասին, որուն պա-  
տասխանին պիտի սպասեմ Շիգակթ մեկնելէ առաջ:

Արդ, Սրբազն Հայր, խոնարհաբար եւ շերմապէս կը խնդրեմ Զերդ Բարձր Սըր-  
բազնութենէն, որ նախ քան իմ երթալս, բարեհաճիք գրել Շիգակթի Ծխական Խոր-  
հուրդին թէ, "այս Քահանան զգուած կը տեսնեմ Շիգակթի Հովուական պաշտօնէն,  
եւ միայն մեր հրահանգին հնազանդելով է ո՞ կը վերադառնայ քաղաքդ." որպէսզի  
պարզ ըլլայ ժողովուրդէն ոմանց համար թէ, ինքնամատոյց եւ իբրեւ մուրացկան  
վերադարձած կը կին, հրաժարելէս ետք: Եւ թող այս մասին լուսաբանեն ժողո-  
վուրդը. Ծխական Խորհուրդէն գանգատ մը չունիմ, բայց ոմանց մէջ այդ մտայնու-  
թիւնը կը տիրէ թէ, - "իմ Շիգակթ մնալս, իրենց համար նպաստաւոր չէ, եթէ հու-  
չըլլամ, Առաջնորդարանը իրենց մնայուն Հովիւ մը տալու պարտաւոր է, եւայլն...:

Վստահ ըլլալով Զեր գւնեցած Հայրական հոգածութեան, կը սիրեմ հաւատալ, որ  
հարկ եղած հրահանգը պիտի բարեհաճիք տալ՝ առ որ անկ է:

Մնամ խորին ակնածանօք եւ համբուրիւ Զեր Սուրբ Աջոյն,

L. Առաջնորդարանը

Թիւ 1929  
Փետրուար 21, 1961

Արժանաշնորհ  
Տ. Ներսէս ՔԸՆՅ. Բարուրեան  
Հոգեւոր Հովիւ Ա. Գրիգոր Լուսաւորիչ նկեղեցւոյ  
Երգակօ.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Փետրուար 15 թուակիր Զեր նամակը, որով կը Հաղորդէք թէ Զեր նախազահութեամբ զումարուած Մխական ժողովը կատարած է Մխական Խորհուրդի անդամներու մասնակի ընտրութիւն, եւ կ'աւելցնէք թէ նկատի ունենալով կարգ մը դժուարութիւններ յարմար տեսած էք ձեր կողմէ երկու հոգի աւելցնել Մխական Խորհուրդի կազմին Վրայ:

Հրահանգուած ենք Ձեզ Հոգի Հաղորդելու հետեւեալը.

1. Մխական Խորհուրդի անդամները կը ընտրուին ժողովին կողմէ եւ գաղտնի բուժարկութեամբ:
2. Հոգեւոր Հովիւը շի կրնար ի պաշտօնէ անդամներ նշանակել Մխական Խորհուրդի կազմին Վրայ / Բացանալ, երբ յարմար նկատուի որ Մխական Խորհուրդի օժանդակ կամ Խորհրդական նշանակուին, եւ այդ նշանակուածները շեն կրնար Մխական Խորհուրդի ժողովին մէջ ցուէ տալ / :
3. Զեր մասնակի ընտրութեան արդիւնքը Հաղորդող նամակը պէտք է որ ստորագրուած ըէլայ նաեւ Մխական Խորհուրդի եւ Մխական ժողովի Առենադպիրներուն եւ Առենադպիրներուն կողմէ / Տեսնել Հարցարանը / :
4. Ներփակ Ձեզի կը դրկենք զոյգ օրինակով "Մխական Տեղեկադիրներու Հարցարան"ը: Հաճեցէք Հարցումներուն պատասխանը լեցնել եւ ստորագրելով վերադանել Առաջնորդարան առաջին պատեհութեամբ՝ պաշտօնագրով մը Հանդերձ:
5. Այս պայմանները լրացուելէն վերջ կը վաւերացուի Զեր ծխական ընտրութիւնը:

Մնամ խորին յարգանօք

Առըն Մանուէլ Եան  
Դիւանապետ

Թիւ 1977  
Մարտ 10, 1961

Արժանաշնորհ

Տ. Ներսէս ՀԵՆՅ. Բարուրեան  
Հոգեւոր Հովիթ Եւ Խախաց Միական Խարչուրդի  
Ս. Գրիգոր Լուսապետի Ծկեղեցոյ  
Միակու.

Միբելի ՏԵՐ Հայր,

Առաջած ենք 1981, օմարուար 25 թուակիր Ֆեր տեղեկագիրը.  
Որով կը հազարժէ ԲԵ Ֆեր Խախացաւութեամբ. օմարուար 12ին գու-  
մարուած Միական ժողովը կատարած է Միական Խարչուրդի մասնակի ընթարու-  
թիւն, և ներկայացնելով գուէարկութեան արգիւնը, կը խնդրե օմարուած  
անձերուն զաւերացնան պաշտօնագիրը:

Ակատի ունենալով որ Ֆեր Միական ժողովը տեղի ունեցած է Թե-  
մական Կանոնադրութեան արամադրութեանց համաձայն, և ընթարուած անձե-  
ռը, իբրև Ակեղեցոյդ նախանձարնդիր ու նուիրեալ անդամներ, կը զայե-  
լին Ֆեր Կամայնորի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը հաւերացնենք  
անձնք ընթարութիւնը, զայ հասեալին.-

Տիար Հայկ Տօնիկեան  
Մարգար Խախապետան  
Խոչիկ Շերանեան  
Ժան Բակլայեան

ՕՐԸՆԵԼՈՎ ՆՈՐՐԵՆԻՐԻ ՊԵՂԱՄՆԵՐԸ՝ կը մազթենք Ֆեր Եւ պատուար-  
ժան Միական Խարչուրդի յաշօղ Եւ արգիւնաւոր գործունեութիւն, ի վառ  
հասուեաց Եւ ի զայեառութիւն Ս. Ծկեղեցոյդ ու ի շինութիւն Կամայն-  
ութիւն Ֆեր սիրեցեալ ժողովուրդին:

Մամի Տիրաւանդ սիրոյ ողջունի  
Աղօթարար

ՄԻԱՆ ԱՐԵՎԱՆԱԿԱՆՈՒՄ  
Հաշնօրդ Հայոց Ամերիկայի

Թիւ 3476  
Փետրվար 2, 1962

Արժանաշնորհ  
Տ. Ներսէս ՀՀՆԴ. Բարօւրծան  
Հոգեւոր Հոգի և Խախակն Մրական Խորհուրդի  
Վ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Ծրագիւ.

Սիրելի Տեք Հայր,

Առաջած ենց Ձեր տեղեացեց, որով կը հազարձէ ԱՌ Ձեր Խախակնաւորի՝ 1962, Յաւնուար 21ին զումարուած Համայնքի Մրական Ֆազովը կատարած է Մրական Խորհուրդի Խախակի ընտրութիւն, և ներկայացնելով ըստեարկութեան արդիւնքը, և ինդրէ ընտրուած անձերուն զաւերացման պաշտօնագիրը։

Ականի ունենալով որ Ձեր Մրական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Խախակութեան արամադրութեան ոց համաձայն, և ընտրուած անձերը, իրեւ Եկեղեցւոյն Խախանախնդիր ու Խորիրաւ անշահներ, կը վայելին Ձեր Համայնքի Ժողովուրդին կառաւութիւնը, այսու կը վաւերացնեմ ու նաց ընտրութիւնը, ըստ Ըստեալին։

Յիսրէ Զազար Շազարծան  
Աւելին Պայտեան  
Նշան Պապիկեան  
Մարտիրոս Քույրեան  
Նարզան Տիտեան

Յունած ըւլալով որ Ձեր անդեկադրին յետ կած ընտրեալներու ստացած ուժեները, կը յանձնաբարեցներ որ առաջին առիթով՝ Ձեր Մրական Խորհուրդի նոր զիւանի կազմի անուն հասցեներուն հետ մրատղ Առաջնարդան ղրիէ։

Օրէնիւով Մրական Խորհուրդի նոր կազմը, կը մազմենց անք եւ պատուարան անզամներուն յաշող ու արդիւնաւոր զործունութիւն, ի պայմանութիւն Ա. Եկեղեցւոյն և ի շինութիւն Համայնքին մեր սիրեցեալ Ժողովուրդին։

Սնամէ Յիսրաւնդ սիրոյ ոզշունք  
Ազօթարար

ՄԻԱՆ ԱՐՁԱԳԱՐՄԱՆՈՒԹՅՈՒՆ  
Առաջնորդ Հայոց ԱՄԵՐԻԿԱՅԻ

Թիւ 3487  
Փետրուար 7, 1962

Արժանաշնորհ

Տ. Ներսէս ՔՀՆՅ. Բարուրեան  
Հոգեւոր Հովհաննես Ս. Գր. Լուս. Ծկեղեցոյ  
Շիգակօ.

Միրելի Տէր Հայր.

Զեր տարեկան տեղեկագրին մէջ ըստ էթ Համայնքիդ Թեմական պատգամաւոր ընտրուած են՝ Յովհաննէս Թաղոյեան, Տօքթ. Հրաշ Խթիկեան, Կարօ Ղազարեան եւ Մակար Նահապետեան։

Կ' Ենթադրեմ թէ առաջին երկու քը բուն պատգամաւորներն են Զեր Համայնքին, իսկ Վերջին երկու քը անոնց անձնափոխանորդները՝ Անշուշտ, եթէ Զեր ծուխի տրատու անդամներու ըլլար 401 Հոգի, պիտի կրնայիք 4 պատգամաւոր տալ, բայց քանի որ Զեր անդամներու թիւն է միայն 125 հոգի, այդ պարագային բուն պատգամաւորները պէտք է ըլլան Յովհաննէս Թաղոյեան եւ Տօքթ. Հրաշ Խթիկեան։

Հաճեցէք այս պարագան հաստատել։

Առաջնորդ Սորագան Հայրը երկու շաբաթուայ Համար Սայամի այցելութեան երթալէ առաջ թելադրեց ինձի անձնապէս Զեզի ըստ թէ Զեր տեղեկագրին մէջ գաղութիդ Հայութեան ընդհանուր թիւը մօտաւորապէս չէիր յիշած, իսկ Համայնքիդ պատկանողներուն թիւը 125 հոգի գրած էիր. մինչդեռ եկեղեցոյդ ունեցած ընդհանուր Հասցեներու թիւը տուած էիր 600 հոգի։ Հաճեցէք այս պարագան եւս պարգել։

Թելադրուած ենք նաև Զեզմէ ինդրել որպէս զի Առաջնորդարան ղրկէք Զեր Թեմական Պատգամաւորներու Զեր եւ Միական նորչուրդիդ ատենպակետի եւ ատենադպիրի կողմէ ստորագրուած վկայագիրերը, որպէս զի անոնց ընտրութիւնը հաստատուի եւ կարենան մասնակցիւ Սայիս 5-6ին գումարուելիք Թեմական Պատգամաւորական ժողովին։

Մասմ խորին յարգանօք

Սուրէն Մանուկյան  
Դիւնապետ

Թիւ 4444  
Յուլիս 3, 1962

Արժանաշնորհ

Տ. Ներսէս ԲԵՆ. Պապութիւն,  
Հոգեւոր Հովիւ Ս. Նողեկաթ Եկեղեցւոյ եւ  
Նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի,  
Խոթ ԱԷՆԹ Լուիզ.

Արթելի Տէր Ներսէս,

Յունիս 30 թուակիր ընդարձակ նաև կզ կարգացած եմ, կը յուսամ թէ  
այլ եւս առաջնորդ վերապատճեն ու ու եռանդով հոգաւական նոր պաշտօնիք  
սկսած Պէտք է իսպատ մոռնալ Ծին սխալ ներն ու վերաբեր եւ նոր ոգիով  
ու սիրով գործի լծուիլ Արքու Փափորութիւն կաշելի չէ ընծլ ցու  
Հովուական պաշտօնիք Համար Անհրաժեշտ է որ հաստառուիս ի ՍԵ յնի Լուիզ  
ու ամբողջ ժամանակի եւ ուժքով նուիրես այդ փոքրիկ, բայց հաւատուոր  
ծուխի Հոգեւոր գործին ու կազմակերպութիւն կրնաս կարճ ժամանակ մը  
միասկ պպրի մինչեւ որ ընտանիքը կարենայ փոքրդրութիւն:

Հաճեցեք մեր Հայրական սիրալիք ողջոյնները հազորուել Պատուարժան  
Միական Խորհուրդին ու մեր սիրեցեալ ժողովուրդին:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով եւ Տիրաւանգ սիրոյ ողջունիք

Աղօթարար՝

ՄԻԱՅ ԱՐԿԵԴԻՆԿՈՂՈՎ  
ԱՐԱՅՈՒՐՈ ՀԱՅՈՑ ԱՄՈՒԿԱՑԻ ԵՒ ԶԱՆԱՑԱԿ

Յունիս 5, 1964

Բարեշնորհ

Յովհաննէս Սըկ. Գալաքարեան  
Հոգեւոր Մատակարար Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Ծիգակոյ

Սիրելի Տիրացու Յովհաննէս,

Եյսօր ստացայ մեր լուսաբժակ նամակը, որ կը վերաբերէր Կաբկ Մը  
Կարեւոր Հարցերու:

Ա. Ձեր ուզած հաստատագիրը ներփակ կը ստանաք:

Բ. Ծիգակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Խորանի եւ սեղաներու  
յատակաղիծները կը վաերացնենք ու կը վերաբժանենք որպէսզի փութով  
շինութեան գործը յառաջ տարուի:

Գ. Եկեղեցւոյ Օծման Գրքոյ յթին համար մեր պատղամը կը դրկենք  
Ժամանակին:

Դ. Հ. Ե. Ե. Կազմակերպութեան Ըարեկան Համագումարի կարգադրութիւններուն  
մեզ տեղեակ պահեցէք: Խոկ մեր պատգամը Երքոյթին համար պիտի ստանքք իր  
ատենին:

Ե. Քայով Ծիգակոյի Եկեղեցւոյ Հովիճի հարցին, կը յուսամ թէ  
ողջմտութեամբ կը կարգադրուի լաւագոյն կերպով:

Մնամք Շփյրակնի սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՀԻՒՆ ԱՐՁԵՅԻՍԿՈՅՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 11535  
Հոկտեմբեր 1, 1964

Հոգեշնորհ

Տ. Վահրին Արդ. Գազանճեան

Հոգեւոր Հովիք Ս. Գրիգոր Լուս. Եկեղեցւոյ  
Նիգակօ.

Սիրել! Հայր Սուրբ,

Հայ Դպրոցի Վերաբերեալ աեր նամակը յանձնեցի Կրթական Տեսուչ  
Պրն. Արտաշէս Մկրտիչեանի ու շաղրութեան։ Այսօր հաստատեցի թէ անրկա  
արդէն իսկ ընթացք տուած է աեր պատուէրին։

Այս առթիւ կը փափաքիմ երկու խնդրանք ներկայացնել աեր սիրե-  
լու շեան։

Ա. Հաճեցէք Առաջնորդարանի թղթածրարարին համար ղրկել Ձեր  
կենսագրական գծերն ու լուսանկարը։

Բ. "Հայաստանեայց Եկեղեցի"ի խմբագրութիւնը շատ գոհ պիտի  
յնայ, եթէ բարեհաճիք Շիգակոյի նորաշէն եկեղեցւոյ օծման  
եւ այդ առթիւ եղած հանդիսութիւններուն նկարագրականը,  
անհրաժեշտ լուսանկարներով միասին, փութացնել Առաջնոր-  
դարան, որպէսզի կարելի ըլլայ թերթի նոյնմբերի համարին  
մէջ տեղաւորել, այլապէս պիտի մնայ մինչեւ հեկտեմբեր։

Այս առթիւ աւելցնեմ թէ Տ. Վրթանէս Արդ. Գալայնեան ստացած  
է Ամերիկա մուտքի վիզա եւ հաւանաբար շուտով մեկնի դէպի նիւ Եռք։

Մաղթելով Ձեզի ողջութիւն եւ ուրախութիւն։

Մնամ սիրով եւ յարգանօք

Սուրէն Սանուէլեան  
Դիւանապետ

Թիւ 1963  
Փետրուար 5, 19:5

Հոգեշնորհ

Տ. Ամերին Արդ. Գազանճեան  
Հոգեւոր Հոկի Ս. Ֆրիգոր Լուս. Ըկեղեցւոյ  
Եւ Նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի  
Շիգակօ.

Միրել Հայր Ամերին,

Առաջան ենք Ձեր 1963 Փետրուար 2 թուակիր տեղեկագիրը, որպէս հաղորդեց թէ Ձեր Նախագահութեամբ՝ Ցունուար 24ին գումարուած ճարթեան Միական Ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի մասնակի ցնուրութիւն, եւ Ներկայացնելով ուստարկութեան արդիւնքներու և խնդրե ցնուրուած անձերուն վաւերացնան պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ցնուրութիւնը կատարուած է ըստ օրինի, այսու կը Վաւերացնենք Հանեւեալ նորը՝ իբրև անդամ Միական Խորհուրդին:

Տիարք՝ ԱՄԻԿԱ Թույլուեան  
Մարթի Յօլացեան  
Փետրու Զլահեան

Կը յանձնարարենք որ առաջին առիթով իսկ Առաջնորդարան գրկեա Միական Խորհուրդի նոր գիւտնի անուն-հասցեները:

Այսու, օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր զործունեութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Ըկեղեցւոյդ եւ ի Հոգեւոր շինութիւն համայնքից մեր սիրեցեալ ժողովուրդին:

Անամք Տիրաւանդ սիրոյ ողջունի  
Աղօթարար

ԱՐԴԱ ԱՐՁԵԱԽՈՒԹԵԱԼՈՒ  
Առաջնորդ Հայոց մեծրիկայի  
Եւ Պահապայի

Թիւ 12146  
Նոյեմբեր 11, 1965

Հոգեշնորհ  
Տ. Վահրիմ Արդ. Գազանծեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Եւ Նախազան Պատուարժան ծխական Խորհուրդի  
Շիզակօ.

Միրելի Հայր Վահրիմ,

Այսու կը յայտնենք թէ Զեր համյնքի երկու պատգամաւորներու պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է նոր պատգամաւորներու եւ անժնափոխանորդեու ընտրութիւն կատարէք:

Կը յանձնարարենք որ Զեր նորընտիր պատգամաւորներուն անուն - հասցեները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը Փետրուար ամսոյ վերջը, որպէս զի կարելի ըլլայ զիրենք հրաւիրել Թեմական Պատգամաւորական ժողովին եւ իրենց ղրկել Թեմական Խորհուրդի տարեկան տեղեկագիրը:

Առաջնորդարանի Դիւանը պիտի կատարէ պատգամաւորներու ստուգումը, հետեւարար, կը թելադրենք որ Զեր եւ ծխական Խորհուրդի ատենապետի եւ ատենադպիրի կողմէ ստորագրուած պատգամաւորներուն ինքնութիւնը հաստատող Վկայագիրը ղրկէք Առաջնորդարան:

Մսամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

Մի՛ն ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Եւ Գանատայի

Յունիս 23, 1975

Մեծայարդ  
Տիար Կարօ Գազագեան  
Եղակօ.

Յարգելի Տիար Կ. Գազագեան,

Առաջնորդ Սրբազան Հայրը քաղաքէս մեկնած պահուն տուացաւ  
Յունիս 11, 1975 թուակիր ձեր նամակը:

Նորին Սրբազնութիւնը կը փափաքի իր գնահատանքը յայտնել  
ազգային-եկեղեցական հարցերու նկատմամբ ձեր ցուցաբերած հե-  
տաքրքրութեան եւ կատարած կարգ մը թելադրութիւններուն, ինչ-  
պէս նաև համայնքիդ գործունէութեան մասին ձեր հաղորդած տե-  
ղեկութեանց համար: Կարգադրութիւններ կ'ըլլան ի մօտոյ եկե-  
ղեցական մը նշանակելու զրադելու համար համայնքիդ հոգեւոր  
կարիքներով:

Առաջնորդ Սրբազան Հայրը ձեզի կը մաղթէ հոգիի ու մարմ-  
նի առաւել առողջութիւն եւ ձեր գործերուն յաջողութիւն:

Յարգանօք՝

Նուպար Քիւփէլեան  
Քարտուղար

Թիւ 24815  
Մարտ 18, 1976

Մածայարգ  
Տիար Նշան Պապիկեան  
Ա. Գրիգոր Լուսաւորիք Ծկեղեցւոյ  
Ժիական Խորհուրդի նախագետ  
Ելզակո.

Սիրելի Տիար Պապիկեան,

Առաջած ենք Մարտ 18, 1976 թուակիր ձեր նամակը ինչպէս նաև Հոգշ. Տ. Կարուժան ծ. Վրդ. Պապանամեանի ժեար. 28, 1976 թուակիր տեղեկագիրը, որով կը հաղորդէ թէ իր նախագահութեամբ ժեարուար 8ին գումարուած համայնքի Ժիական Ժողովին մէջ կառարուած է Ժիական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բոււարկութեան արդիւնքը՝ կը ինդրէ ընտրուած անժերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր Ժիական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Աս- նունադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ առորեւ արուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժիական Խորհուրդի նորընտիր Դի- անի անդամոց անունները:

Օրինելով Ժիական Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք յաջող եւ արդիւ- նաւոր զործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Ծկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՉԱՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՎ  
Առաջնորդ

Մարք Նահապետան  
Ճար Զօլագեան  
Տոքթ. Մարթին Ռւիլեք

Թիւ 24822  
Մարտ 24, 1976

Մոծայարգ  
Տիար Կարօ Յ. Գագաղնան  
Գրեզնո.

Յարգելի Տիար Գագաղնան,

Ստացած ենք Ս. Զատկուան առթիւ շնորհաւորական ձեր բացիկը,  
որուն համար կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Այս առթիւ կը փափարինք նաև մեր զնահատանքը յայտնել ձեզի  
այն մօտիկ հնապրրութեան համար զոր ցոյց կու աար հանդեպ Եր-  
գակոյի ձեր պատկանած Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Առաջնորդարանի Թեմական Խորհուրդը իր կարելին կ'ընէ մեր  
թեմի բոլոր Եկեղեցիներու պայծառութեան համար եւ կը ֆանայ ան-  
հովիւ Եկեղեցիներուն այցելու կամ մայյուն հովիւներ ազահովել:  
Վասահ ենք որ մօտիկ ապագային կարելի կ'ըլլայ նաև Երգակոյի  
Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ համար հովիւի մը նշանակումը:

Ձեզի կը մաղթենք բաշխողը եւ երկար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՅԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՎՈՒ  
Առաջնորդ

Յունուար 26, 1977

Մեծայարդ  
Տիար Միսալ Բալօնան  
Ելբակո.

Յարգելի Տիար Բաքօնան,

Առաջնորդ Արբազան Հայրը ժամանակին ստացած է ձեր նամակը, ուր հնապարհական առաջթիվ մը ներկայացուցած էիք: Նման ձեռնարկ մը թէ կարող մարդու եւ թէ դրամի կը կարօտիր. եւ եթէ աշխատանք տարուի օգտակար գործ մը կատարուած կ'ըլլայ:

Հայաստանի Տրդատ հեթանոս թագաւորն էր որ Գրիգոր Լուսաւորիչը իոր վիրապը նետել առւաւ: Լուսաւորիչը վիրապին մէջ ապրեցաւ 18 տարի, ապա խելազար Տրդատ թագաւորը թոշկեց, եւ 801 թուականին բրիստուէտիւնը պետական կրօնք հոչակուեցաւ Հայաստանի մէջ: Ազգովին եւ պետութեամբ առաջին բրիստունայ ժողովուրդը ըււագու պամիւը կը պատկանի Հայ Ազգին:

Նորին Արբազնութիւնը ձեզի կը մաղթէ բաժառողջութիւն եւ երկար կեանք:

Յարգանօր՝

Նուպար Քիւփէլ Եան  
Քարտուղար

Թիւ 25445  
Հոկտեմբեր 27, 1977

**Մեծայարգ**

Տիար ծործ նահապետեան  
Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
ծխական Խորհուրդի Առենապետ  
Եկակօ.

Յարգելի Տիար նահապետեան,

Այսու կը տեղեկացնենք թէ համայնքիո պատգամաւորի պաշտօնավարութեան շոջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք պատգամաւորի եւ անոր անձնափոխանորդին համար՝ Թեմական Կանոնադրութեան 14-Պ. եւ 54 յօդուած-ներուն համաձայն։

Հստ ծեր Եկեղեցւոյ 1976 տարուան տեղեկագրին՝ համայնքու կը հաշուի 83 տրասու անդամ, ուրեմն ծխական ժողովդ իրաւունք ունի կատարելու մէկ նոր պատգամաւորի ընտրութիւնը։

Կը յանձնարարենք որ ծեր նորընտիր պատգամաւորին անունը, հասցէն եւ հեռածայնի թիւը Առաջնորդարան դրկէք ամենէն ուշը Փետրուար ամսուան ըս-կիզբը՝ որպէս զի կարելի ըլլայ զինք հրաւիրել Թեմական Պատգամաւորական 76րդ Տարեկան ժողովին, որ պիտի գումարուի Մայիս 4-6, 1978, Հինգշաբ-թի, Ուրբաթ եւ Թարաթ օրերը՝ Տիթրոյթ Միշիկընի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ։

Կը թելադրենք որ նորընտիր պատգամաւորի թնթիւնը հաստատող վկայա-գիրը, ծխական ժողովի նախագահի եւ ծխական Խորհուրդի Առենապետի եւ Առենա-դպիրի կողմէ ստորագրուած, Առաջնորդարան դրկէք ընտրութենէն անմիջապէս ետք։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Թիւ 25584  
Դեկտեմբեր 21, 1977

Հոգեշնորհ

Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան

Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ

Նախազահ ծխական Խորհուրդի

Եիզակօ.

Սիրելի Հայր Ժիրայր,

Համեցէք ներփակ գտնել 1000 --մէկ հազար-- տոլարի  
թիւ 371 փոխգիրը՝ որ Մէրի Պայլոզի կտակէն 1977 տար-  
ւան համար Եիզակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
բաժինը կը ներկայացնէ:

Կը յուսանք որ այս կարծ ժամանակի ընթացքին արդէն  
իսկ ընտելացաք Եկեղեցական եւ ընկերային կեանքին եւ  
համայնքային գործերը ձեռն հասօրէն սկսած էք ղեկավարել:

Կը շնորհաւորենք նոր Ցարին եւ Ս. Ծնունդը՝ ձեզի  
եւ ծխական Խորհուրդիդ բոլոր անդամներուն մաղթելով ա-  
ռաւել առողջութիւն եւ արդիւնաւոր տարիներ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ